Պատկերները և նրանց համառօտ բացատրութիւնները համարագրուած են ժամանակագրական կարգով նիւթի տեսակաւորութեան համեմատ (քար, որմանկար, մետաղ, ձեռագիր), իսկ ընդհանուրի համար կազմուած է յատուկ ժամանակագրական Ցուցակ։

1. Մոզայիկ արձանագրութիւն Զիթենեաց սարի վերայ։ Սոյն նկարն առնուած է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի սրահում չափագրութեամբ և հարազատութեամբ պատրաստուած իւղանկարից պատկերից. Երուսաղեմի մոզայիկ հայ արձանագրութիւնների լուսանկարչական նմանահանութիւնները տպագրուած են Zeitschrift des Deutschen Palästina Vereins, Band XXXIV, մեր նկատողութիւնների հետ. այժմ համարում ենք ոչ ուշ քան Զ—Է դարերի գործ։ Գիրը բոլորաձև, միջակ մեծութեամբ երկաթագիր է։

Բարեխաւս ունելով
առ Ա՛ծ զսուրբ Է
սայի եւ զերանելի
+ հարսս ես վ՛աղան ա
ռարի վասն թողու
թեան մեղաց զյի
շատակարանս զայս։

2. Տեկորի արևմտեան դրան ճակատի արձանագրութիւնը, որ կիսատ է առաջի մասում։ Այս արձանագրութիւնը համարւում էր դրի ամենահին մնացորդը Հայոց մէջ (Ալիշան. Շիրակ 132, սխալ ընթերցուածներով), բայց տարակոյսներ կան սկզբնագիր լինելու մասին (Թորամանեան. Տեկորի տաճարը 1911. Թիֆլիս. եր. 99)։ Գրերի ձևին նայելով, պէտք է ոչ ուշ, քան Է. դարը համարել. արձանագրութեան մի բեկոր սորա ա-ի նման ձևերով տեսել ենք Թալինի գերեզմանատանը։ Արձանագրութեան մեծութիւնը առաջին երկու տողի 2 մ. 70 սմ.×10½ սմ., երրորդ տողի 1 մ. 90 սմ., վերջին տողի, աւելի խոշոր գրերով, 1 մ. 75 սմ.×6 սմ.։

Արձանագրութեան վերարտադրութիւնն անբաւարար է, մանաւանդ վերջին տողը խսկականում (original) ևս փչացած լինելու պատճառով։

1. Պիսկա(պ)ոսի եւ Տայրոնի Տեկորոյ վանայ երիցու
եւ Մանանայ հազարապետի Ուրանայ հոռոմի. որ
2. եւ հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յոհանու Հայոց
կաթողիկոսութեան եւ Յոհանու Արշարունեա(ց)
3. յիւր բարեխաւսութիւն եւ բոլոր ազգին եւ
ամուսնի եւ որդեկայ եւ սիրելեաց եւ